

ւական էր, որքան անպէտ՝ իր «ճամբաներում»: Նաւթի քաղաքին մեծ ու խելացի վաճառականը, քանի մը պատիկ միլիոնատէր իր հրահանգը դրկեր էր Մաթիկին, շատ հաւանաբար նկատի առնելով անոր ճղճիմ մարմինը, համակ կրակ սա անձնաւորութեան համար այնքան «անպէտքական», անկարելի նոյնիսկ: Ապահով իր բնագոյովը գործի մարդու, նաւթի իշխանը այդ մարմինը անընդունակ կը յայտարարէր «գործօն ծառայութեան», թրքա-հայ «ճակատում», ուր տիրող նոր պայմաններու, զորս վարող հակամարտութեանց մասին ունէր լայն ծանօթութիւն, հիւպատոսական խողովակներով իրեն հասնող: Գործի մարդոց վաղածանօթ հոտառութիւնը, հասկացողութիւնը իրենց ասպարէզէն դուրս հարցերու մասին: Նաւթի վաճառականը իր ժողովուրդին հարազատ զաւակը, անոր հին, աւանդական առաքինութեանց հաւատացող, սիրտէն, ձեռքէն, միտքէն բո՛ւլս՝ բոլոր դիմողները չմերժելու տկարութեամբ մը, մա՛նաւանդ 1880ի մարդոց մոլեռանդ իմաստութեամբը զրահաւոր, որ մեր զարթօնքը եւ վաճառականութեան ոսկեդարը ճարտարապետեց Պոլիս թէ Թիֆլիս, մինչեւ 1878ի բախտորոշ թուականը: Նաւթի վաճառականը կը զգա՞ր, կը հեռզգա՞ր վտանգը, որ կը հանդերձուէր «հայ ժողովուրդի գլխուն», 95ի դէպքերէն ետք...: Մաթիկ Մելիքխանեանց տենդոտ, երկար գրութեամբ մը «փողի իշխանաւորը» կը հրաւիրէր իր պարարտացումը «էլի շարունակելու», աշխատաւորներու քրտինքին մէջ բոյժի դրած իր անյագ ախորժակները: Ժողովուրդի դատը՝ ժողովուրդի զաւկըներուն խելքովը, կորովովը: Նաւթի իշխանը զոջաց չարաչար իր հրահանգին համար, փոքրահասակ տրիբունէն այսպէս լայն ինքնաբաւութեամբ, ամբարտաւանութեամբ ստանալով իր պարտ ու պատշաճ պատասխանը եւ մանէթներու տրցակը, զոր իր երեսին կը շարտէր (քանի որ անիկա գտած էր կերպը իր քիչ մարմինը «էժան» ապրեցնելու, մատ չերկարելով վաճառականէն առատասիրտ բաշխուած կենսաթոշակին, գիշերային սպասար-